



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

ՄԱՅՐԱՊԵՏՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

**«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ն ներկայացնում է սույն դիտարկումը
ՄԱՅՐԱՊԵՏՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԻ առնչությամբ:**

Փաստեր

1. 2018 թվականի հոկտեմբերի 6-ին ՀՀ Քրեական օրենսգրքի 38–311–րդ հոդվածներով հարոցվել է քրեական գործն 2018 թվականի հոկտեմբերի 9-ին ՀՀ քաղաքացի Սամվել Մայրապետյանի նկատմամբ ՀՀ ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ կիրառվել է խափանման միջոց՝ կալանք երկու ամիս ժամանակով:
1. 2018 թվականի հոկտեմբերի 6- ին փաստաբանական խումբը ներկայացրել է Սամվել Մայրապետյանի առողջական վիճակը բնութագրող բժշկական տեղեկանքներ: 2018 թվականի նոյեմբերի 14-ին՝ 39 օրանց, նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն նրա առողջական վիճակի պարզման և գնահատման նպատակով:

Հայաստան, 0002, ք. Երևան, Ամիրյան 11, բնակարան 24
Հեռ. +374(10) 505 303 Բջջ. +374(98) 505 303
Էլ. Փոստ՝ info@prwb.am, Կայքէջ՝ www.prwb.am



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2. 2018 թվականի նոյեմբերի 29-ին դատարանի որոշմամբ ՀՀ քաղաքացի Սամվել Մայրապետյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցի՝ կալանքի ժամկետը երկարացվել է ևս երկու ամիս ժամկետով:
3. 2018 թվականի դեկտեմբերի 27-ին դատարանը բավարարել է Սամվել Մայրապետյանի պաշտպանների ներկայացրած միջնորդությունը կալանավորումը 30 միլիոն դրամ գրավով փոխարինելու վերաբերյալ:
4. 2018 թ. դեկտեմբերի 28-ին և 29-ին Ս. Մայրապետյանը գրությամբ դիմել է ՀՀ Հատուկ քննչական ծառայությանը և խնդրել է իրեն վերադարձնել նախաքննության մարմնի կողմից վերցված իր անձնագիրը և թույլ տալ իրեն մեկնել Գերմանիա:
5. 2019 թվականի հունվարի 2-ին Սամվել Մայրապետյանը միջնորդությամբ դիմել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ խնդրելով կիրառել միջանկյալ միջոց:
6. 2019 թվականի հունվարի 8-ին ՀՀ Հատուկ քննչական ծառայությունը վերադարձրել է Սամվել Մայրապետյանի անձնագիրը, սակայն մերժել է թույլատրել նրան մեկնել Գերմանիա:
7. 2019 թվականի հունվարի 17-ին Մարդու իրավունքների Եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցիչը հաղորդագրություն է տարածել այն մասին, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Դատարանի կանոնների 39-րդ կանոնի համաձայն բավարարել է Սամվել Մայրապետյանի՝ 2019 թվականի հունվարի 2-ի միջնորդությունը միջանկյալ միջոց ձեռնարկելու վերաբերյալ:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Գործին առնչվող այլ կարևոր տեղեկություններ

8. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կանոնների 39-րդ կանոնի համաձայն՝ իր իրավունքին սպառնացող էական և անդառնալի վնասը կանխելու համար Դիմումատուն կարող է Դատարանին խնդրել միջանկյալ միջոց կիրառել:
9. Դատարանը բացառիկ դեպքերում է բավարարում իրեն ներկայացված ժամանակավոր միջանկյալ միջոց կիրառելու միջնորդությունները: Եթե Դատարանը, ուսումնասիրելով միջնորդության մեջ ներկայացված հանգամանքներն ու բարձրացված խնդիրները, համոզվում է, որ Դիմումատուն կարող է էական և անդառնալի վնաս կրել, այդ դեպքում բավարարում է ներկայացված միջնորդությունը և դիմում պետությանը՝ ձեռնպահ մնալու որոշակի գործողություններից:
10. Դատարանի պրակտիկայի համաձայն՝ միջանկյալ միջոց կիրառելու միջնորդությունը բավարարվում է, եթե առկա է.
 - Կյանքին սպառնացող վտանգ,
 - խոշտանգում, որն արգելված է Կոնվենցիայի 3-րդ հոդվածով:
12. 2018 թվականի դեկտեմբերի 29-ին Սամվել Մայրապետյանի փաստաբանական խումբը հայտարարություն է տարածել, որի համաձայն՝ Սամվել Մայրապետյանը կարիք ունի շտապ բժշկական միջամտության՝ կյանքի ցուցումով: Մի շարք անվանի վիրաբույժներ, հրավիրված կոնսիլիումի արդյունքում, կարծիք են հայտնել, որ Հայաստանի Հանրապետությունում



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

հնարավոր չէ կազմակերպելու տրամադրել մասնագիտացված բուժում, քանի որ Հայաստանի Հանրապետությունում բացակայում է տրանսյումին ալդրենավորման տեխնիկան:

13. 2019 թվականի հունվարի 10-ին Սամվել Մայրապետյանի փաստաբանական խմբի կողմից տարածված հայտարարության համաձայն՝ 2016 թվականի նոյեմբերի 9-ին Սամվել Մայրապետյանը հոսպիտալացվել է Երևանում սուրնեկրոտիկ պանկրեատիտ ախտորոշմամբ և նույն օրը կյանքի ցուցումով վիրահատվել է: Այնուհետև, բուժումը շարունակել է Գերմանիայի մասնագիտացված կլինիկայում: Ըստ փաստաբանների հայտարարության՝ մինչև 2018 թվականի հոկտեմբերի 9-ի կալանավորումը պարբերաբար արված հետազոտությունների, ինչպես նաև կալանավայրում գտնվելու ժամանակ կատարված հետազոտությունների և դատաբժշկական փորձաքննության շրջանակներում արված հետազոտությունների համադրումը թույլ են տալիս միանշանակ պնդել, որ Սամվել Մայրապետյանի ընդհանուր լեղածորանում առաջացած մեծորամաչափի քարն առաջացել է Սամվել Մայրապետյանի կալանավայրում գտնվելու ժամանակ: Փաստաբանների հայտարարության համաձայն՝ ընդհանուր լեղածորանում քարի առկայությունը Մայրապետյանի պարագայում կրում է շատ լուրջ վտանգ, քանի որ այդ քարը կարող է ցանկացած պահի փակելը նդհանուր լեղածորանը, ինչն արդեն իսկ տարած ծանր հիվանդության և քրոնիկ բորբոքման վիճակում գտնվող ենթաստամոքսային գեղձի պարագայում շատ բարձր հավանականությամբ կրերի բուն հիվանդության կայծակնային սրացման: Ըստ փաստաբանների՝ հիվանդության դեմ պայքարելու անհրաժեշտ միջոցներ Հայաստանում, ցավոք, չկան:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Գործի առնչությամբ ԻՊԱՍ-ի դիտարկումները

14. Սամվել Մայրապետյանի փաստաբանական խմբի և ՀՀ իշխանության տարբեր ներկայացուցիչների հրապարակած հայտարարությունները և հարցազրույցները վկայում են, որ Սամվել Մայրապետյանի խափանման միջոց կալանքը փոխարինվել է գրավով մինչև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից 39-րդ կանոնի համաձայն ներկայացված միջնորդության բավարարումը:

15. Չնայած կալանքի վերացմանը՝ ՀՀ նախաքննության մարմինը՝ ՀՀ Հատուկ քննչական ծառայությունը, Սամվել Մայրապետյանի անձնագիրն անհապաղ չի վերադարձրել վերջինիս:

16. Ի պատասխան Սամվել Մայրապետյանի փաստաբանների կողմից վերջինիս առողջական վիճակի վատթարացման վերաբերյալ ավելի քան 3 ամիս ընթացող շարունակական հայտարարություններին՝ Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից հրապարակային որևէ պարզաբանում կամ բացատրություն չի ներկայացվել վերջինիս առողջական վիճակին Հայաստանի Հանրապետությունում բուժման հնարավորության կամ անհնարինության վերաբերյալ:

17. Եթե Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս մասնագիտացված բժշկական հաստատությունների, Սամվել Մայրապետյանի բուժսպասարկման համար համարժեք հնարավորություններ չունի, ապա ակնկալվող բուժօգնությունը կարող է ձեռքբերել՝ հրավիրելով Հայաստանի Հանրապետությունից դուրս համապատասխան բժիշկ-մասնագետների և



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՋԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ապահովել համապատասխան սարքավորումներով կամ ապահովել Սամվել Մայրապետյանի բուժումը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս:

Անհրաժեշտ է նշել նաև, որ 2017 թվականին ՀՀ դեմ 39-րդ կանոնի ներքո ներկայացվել է դիմում նաև Սասնա Ծռեր խմբի անդամ Հովհաննես Հարությունյանի կողմից: 39-րդ կանոնի ներքո գանգատը ներկայացված է եղել 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, ՄԻԵԴ-ը փետրվարի 3-ին նամակով Կառավարությունից պահանջել է ձեռնարկել անհրաժեշտ քայլեր՝ Հ.Հ-ի բուժօգնությունը քաղաքացիական հիվանդանոցում ապահովելու համար: